



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)

[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

# SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

03rd February 2019

Bulletin 05/2019

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ՏԻՄՈԹԷՆՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2 :15-19

Ձանա՛ դուն քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամչնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը: Բայց հեռո՛ւ կեցիր սրբապիղծ ունայնաբանութիւններէն, քանի որ անոնք աւելի պիտի յառաջդիմեն ամբարշտութեան մէջ, եւ անոնց խօսքը պիտի ճարակէ քաղցկեղի պէս: Ասոնցմէ՛ են Հիմէնոս եւ Փիղետոս, որոնք վրիպած են ճշմարտութենէն՝ ըսելով թէ մեռելներուն յարութիւնը արդէն եղած է, եւ կը կործանեն ոմանց հաւատքը: Սակայն Աստուծոյ հիմը ամուր կը կենայ եւ ունի սա՛ կնիքը. «Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են», նաեւ. «Ո՛վ որ կ'արտասանէ Քրիստոսի անունը՝ թող հեռանայ անիրաւութենէ՛»:



*Timothy Learning the Scriptures*

### The Epistle of St Paul to the 2 Timothy 2:15-19

Do your best to present yourself to God as one approved, a worker who does not need to be ashamed and who correctly handles the word of truth. Avoid godless chatter, because those who indulge in it will become more and more ungodly. Their teaching will spread like gangrene. Among them are Hymenaeus and Philetus, who have departed from the truth. They say that the resurrection has already taken place, and they destroy the faith of some. Nevertheless, God's solid foundation stands firm, sealed with this inscription: **Ք**The Lord knows those who are his,**Մ** and, **Ք**Everyone who confesses the name of the Lord must turn away from wickedness.**Մ**

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 6:39-47

Եւ զիս դրկող Հօրը կամքը սա՛ է, որ ո՛չ մէկը կորսնցնէմ բոլոր անոնցմէ՛ որ ինք տուաւ ինձի, հապա յարուցանեմ զանոնք՝ վերջին օրը: Որովհետեւ զիս դրկողին կամքը սա՛ է, որ ո՛վ որ տեսնէ Որդին ու հաւատայ իրեն՝ ունենայ յաւիտենական կեանքը. ե՛ս ալ պիտի յարուցանեմ զայն՝ վերջին օրը»:

Ուստի Հրեաները կը տրտնջէին իրեն դէմ, որովհետեւ ըսաւ. «Ե՛ս եմ երկինքէն իջած հացը», եւ կըսէին. «Ասիկա Յովսէփի որդին՝ Յիսուսը չէ՛, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. հապա ի՞նչպէս ասիկա կըսէ. «Ես իջայ երկինքէն»»: Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Մի՛ տրտնջէք ձեր մէջ:

Ո՛չ մէկը կրնայ գալ ինձի՛՝ եթէ զիս դրկող Հայրը չքաշէ զայն. ու ես պիտի յարուցանեմ զայն՝ վերջին օրը: Մարգարէներուն մէջ գրուած է. «Բոլորն ալ սորված պիտի ըլլան Աստուծմէ՛»: Ո՛վ որ կը լսէ Հօրմէն ու կը սորվի՛ ինձի՛ կու գայ: Ո՛չ մէկը տեսած է Հայրը, բացի անկէ՛ որ

## 2: A short interpretation of the Scripture reading

Աստուծո՞ւմ է. անիկա՛ տեսած է Հայրը: Ճշմա՛րտապէս, ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի.  
“Ա՛ն որ կը հաւատայ ինձի՝ ունի՛ յաւիտենական կեանքը”:

### The Holy Gospel of Jesus Christ according to John 6:39-47

This is the will of Him who sent Me, that of all that He has given Me I lose nothing, but raise it up on the last day. For this is the will of My Father, that everyone who beholds the Son and believes in Him will have eternal life, and I Myself will raise him up on the last day.

Therefore the Jews were grumbling about Him, because He said, I am the bread that came down out of heaven. They were saying, Is not this Jesus, the son of Joseph, whose father and mother we know? How does He now say, ‘I have come down out of heaven’? Jesus answered and said to them, Do not grumble among yourselves. No one can come to Me unless the Father who sent Me draws him; and I will raise him up on the last day. It is written in the prophets, ‘AND THEY SHALL ALL BE TAUGHT OF GOD.’ Everyone who has heard and learned from the Father, comes to Me. Not that anyone has seen the Father, except the One who is from God; He has seen the Father. Truly, truly, I say to you, he who believes has eternal life.

### Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly meeting will take place on 3rd February 2019 at St Yeghiche Armenian Church at 1:30pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year 2018.

Your attendance is extremely important to evaluate and support your Parish and its council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish.

We look forward seeing you

**St Yeghiche Armenian Church Parish Council**



**“Տեանընդառաջ”** Faith, Hope and Love are principle graces and values in Christianity. During a person’s baptism, the priest asks the godfather what does the child or the person (the catechumen) being baptised requests. “Faith, hope, love and baptism,” responds the godfather. St. Paul underlines that “the greatest of these is love” (1 Corth. 13.13). In 2016, the Primate instituted a new tradition of blessing newlywed couples in the Armenian Church on the occasion of the Feast of the Presentation of Our Lord and Saviour Jesus Christ. This is the feast celebrating the event of Jesus’ presentation to the temple as a child by his parents. On Wednesday 13th February 2019, we will be celebrating Տեանընդառաջ Presentation of Jesus Christ to the Temple. A special Blessing of Young Families will follow

the special prayers. Bishop Hovakim will preside over the proceedings. Please bring your children and let us celebrate this unique Armenian Tradition .

### St Vartanantz

**St Yeghiche Parish Council is proud to invite our faithful on the occasion of St Vartanantz, to celebrate Divine Liturgy on Thursday 28th February 2019 at 7:00 pm at St Yeghiche Armenian Church, Cranley Gardens, Kensington London SW7 3BB, UK. His Grace Bishop Hovakim will preside and give the sermon of the day. Please bring along your children and let us celebrate the feast of St Vartan who fell for the right to worship our Christian faith and Homeland.**



## Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Մրբոյ. ամէն:

"Այս է կամքը իմ Հօր, որ ինձ ուղարկեց. բոլոր նրանք, ում Հայրն ինձ տուել է, նրանցից ոչ մէկին չկորցնեմ..." (Յովհ. 6:39):

Երկիր մոլորակի վրայ մարդկութեան քանակն արդէն յատել է 7.5 միլիարդը (7.5 billion), որի 31%-ը իրեն իբրեւ քրիստոնեայ է ընդունում:

Մեր դէպքում ազգային եկեղեցի յանգամանքն արտայայտուում է հայալեզու պաշտամունքով եւ հայ քրիստոնեական հոգեւոր դասանական եւ ծիսական ասանդոյթով: Մեր ազգային կեանքի մասին խօսելիս կարելի է վստահութեամբ կրկնել Եղիշէ պատմիչի նկարագրութիւնը, որ քրիստոնէութիւնը անփոփոխ կերպով մեր մաշկի գոյնն է, որ անգամ կոտորածներից, աշխարհասփիւռ լինելուց եւ կոմունիստական աստուածամերժ շրջանից յետոյ էլ դա շարունակում է այդպէս մնալ:

Յայտնի է, որ մարդը միշտ այլ մարդու է փնտրում՝ շփման, մտերմութեան, ընկերութեան համար, որպէսզի իրեն մաս զգայ ընտանիքի եւ հասարակութեան (ընկերութեան): Բայց մի յետաքրքիր օրէնք կայ. ամէն մէկը իր նման մարդ է փնտրում եւ գտնում, ինչպէս գրաբարով է ասուում. "Նման գնմանն գտանէ": Այժմ իւրաքանչիւրս նայենք մեր կեանքին, մեր յարաբերութիւններին, ծանօթութիւններին ու մտերմութիւններին: Ո՞ւմ ենք մենք նման եւ ովքեր ըն նման մեզ, որ սրտի թելերով ձգենք միմեանց: Ո՞ւմ հետ ենք ձգտում ծանօթ կամ մտերիմ լինել, ո՞ւմ հետ ենք կիսում մեր ցաւը, ուրախութիւնը եւ հանապազորեայ հացը, ովքեր ը են մեր ու մեր ընտանիքի մշտական բարեկամ-այցելուները:

Սուրբ Գիրքն ասում է, որ մարդ ստեղծուած է Աստծոյ պատկերով եւ նմանութեամբ: Յայտնի է, որ դա արտաքինին չի վերաբերում, այլ ազատ կամքով եւ բանականութեամբ անմահ հոգուն: Քրիստոսով վերականգնուեց այդ խզումը, Աստծոյ հետ մտերմութիւնը, Քրիստոս Իր աշակերտներին բարեկամներ եւ իւրայիններ կոչեց՝ ասելով. "Դուք իմ բարեկամներն էք, եթէ անէք այն, ինչ ես ձեզ պատուիրում եմ: Այլեւս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետեւ ծառան չգիտէ, թէ տերն ինչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի" (Յովհ. 15:14-15): Քրիստոսով վերականգնուած տէրունական պատկերն է մեր մէջ, որ մաքրում է հայեացքը՝ տեսնելու Քրիստոսի բարեկամներին՝ այլ քրիստոնեաներին, ովքեր ներսում Քրիստոս ունեն:

Մենք էլ եկեղեցու համայնք եւ ծուխ ենք, Աստծուն հայաղօք շուրթերով եւ սրտով պաշտողներ: Հոգեւոր կեանքի կարեւոր պտուղներից մէկը մտերմութիւնն է այլ քրիստոնեաների հետ՝ իբրեւ Քրիստոսով շաղկապուածներ մէկ ընտանիքի մէջ, որի հայրն Աստուած է: Երբեմն լինում են դէպքեր, երբ տարիներով նոյն եկեղեցի այցելողները ծանօթ եւ մտերիմ չեն միմեանց, ուր մնաց հոգի եւ սիրտ կիսեն, միմեանց սատարեն եւ աղօթեն իրար համար: Դրա համար բուն աղօթական պաշտամունքային ժամերից զատ միասին Սուրբ Գիրք կամ սուրբերի վարքեր ընթերցելու, խոկալու, աղօթելու, ընտանիքներով քրիստոնեական բարոյական կեանքի մտերմութեամբ զօրանալու ճամփան պիտի անցնենք:

Մրան են ուղղուած նաեւ տարեկան եւ ամսական ծիսական ժողովները, միասին սիրոյ ճաշերն ու հանդեսները, հոգեւոր կեանքը զօրացնող եւ աշխուժացնող նախաձեռնութիւնները: Ինչպէս մեր ընտանիքի, այդպէս էլ հոգեւոր այս ընտանիքի մէջ կարեւոր է իւրաքանչիւր մէկը: Ուրեմն.

**ա.** վերաբժեւորենք Տիրոջ պատկերն ու նմանութիւնն ունենալու մեր քրիստոնեական կոչումը՝ Քրիստոս մեր մէջ է սկզբունքով,

**բ.** առաւել աշխոյժ հոգեւոր կենցաղ ունենանք՝ Աստծոյ խօսքը եւ սուրբ Հայրերի խրատները կարդալով, աղօթելով, գործելով, ապրելով իբրեւ Քրիստոսին կենդանի կրող եւ ապրեցնող մարդիկ,

**գ.** առաւել մօտ ճանաչենք, մտերմանանք ու հոգ տանենք իրար՝ գնահատելով եւ զօրացնելով միմեանց սիրոյ այս ճամփորդութեան մէջ:

Այդ ժամանակ Աստուած կը տեսնի մեր նմանութիւնը Իրեն, կը գայ եւ կը բնակուի մեր մէջ, Իր Հոգով կը միաւորի մեզ եւ թոյլ չի տայ ոչ մէկի կորսուելը՝ արժանացնելով կեանքի յարութեան:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

### 3: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By The Armenian Relief Society of GB (Հայ Օգնութեան Միութիւն), in memory of their late Ungerouhiner: **ARPINEH LEVONIAN** (Արփինէ Լևոնեան), **NELLY HOVSEPIAN** (Նելլի Յովսէփեան), **HRIPSIK MARTINIAN** (Հրիփսիկ Մարթինեան), **HASMIK GASPARIAN** (Յասմիկ Գասպարեան), **SIROUN CROFT** (Սիրուն Զրոֆթ), **ALICE KARAPETIAN** (Ալիս Կարապետեան), **OVSANNA KHULIAN** (Ովսաննա Խուլեան), **RUBINA BOGHOSIAN** (Ռուբինա Դողոսեան), **FLOR AZOIAN** (Ֆլոր Ազոյեան), **MARIE CHOLAKIAN** (Մարի Չոլաքեան), **MAGGIE ASLANIAN** (Մագի Ասլանեան), **ANGEL DADOURIAN** (Անժել Տատուրեան), **ARSHAKOUHI NANAJANIAN** (Արշակուհի Նանաջանեան), **KNARIK HOVHANNESIAN** (Քնարիկ Յովհաննէսեան), **SIRAN HAGOPIAN** (Սիրան Յակոբեան), **NAZIK GRIGORIAN** (Նազիկ Գրիգորեան), **KATHY GHOURJIAN** (Քաթի Դուրջեան), **NVART KHLOIAN** (Նուարթ Խլոյեան), **KNARIG YOUNG-VARTANIAN** (Քնարիկ Եանգ-Վարդանեան), **ANGEL BESHIRIAN** (Անժել Բէշիրեան), **ROZIK BANIAN** (Ռոզիկ Բանեան), **SEDA ARZOOMANIAN** (Սեդա Արզումանեան), **LOUSIK ARZOOMANIAN** (Լուսիկ Արզումանեան).

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: 07970 146 280 or 020 7373 8133 or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at 020 7373 8133, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, 13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.